Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՏՂԱՄԱՐԸ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.
«ՊԱՏԿԻՆԵԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ» ՏՊԱՐԱՆ
ԼԵՐՏՈՒԿՈՎ. ՓՈՂՈՑ, Ե. 4.
1902



398
Բ-91
Ա

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՏՂԱՄԱՐԴԸ

749

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
ԼԵՇՏՈՒԿՈՎ ՓՈՂՈՑ, Տ. 4.
1902

ԱԲԵ
ԱԲ 1

11 MAR 2013

55.803

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Ноября 1901 года.

Петербургъ 30 ноября 1901 г.

4276
41

Типографія „Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.

0120-10

ՏԻԿԻՆ ՄՐԱՌՈՒՀԻ ՏԻՒՍԱԲԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դեռ հայի մտաւոր կեանքը ծածկուած է խաւարի մշուշով, հայ կինը դեռ նիրհում է ստրկութեան լծի տակ. Դու էիր, որ զարկիր քնարիդ քնքուշիկ լարերին և մի անուշ ձայն բարձրացրիր՝ յանուն արդարութեան, յօգուտ կանանց իրաւունքների:

Եւ այդ ձայնը Թռաւ, Թռաւ անցաւ երկրից երկիր, բերնից բերան: Քո զեղուն զգացմունքներով ցօղուած վէպերը «Մայտա», «Սիրանոյշ» և «Արաքսեա» հայերիս համար ընթերցանութեան քաղցր նիւթ դարձան:

Դու առաջի՛ն հայուհին էիր, որ պաշտպանեցիր կանանց ազատութեան հարցը:

Դու առաջի՛ն հայ վիպագրողն էիր, որ գրիչդ նուիրեցիր այդ ազատարար գործին:

Թող ուրեմն քո անմահ յիշատակին ծառայէ իմ այս համեստ աշխատութիւնը, որի շշաւոած գաղափարները այնքան մօտ էին քո սրտին, այնքան ոգևորութիւն էին տալիս քո գրչին...

ՀԵՂԻՆԷ.

Մի՞թէ թշնամութեան ու անբարոյականութեան սերմեր չի ցանում այն հանգամանքը, որ տղամարդկանց դաստիարակումն կանանցից հեռու, որ կանանց ծածկում են տղամարդկանցից։

Մի՞թէ խորհրդաւորութիւնը չէ, որ նրանց բնական ու փոխադարձ հակումը հասցնում է անմտութեան, որ մշտական թիւրիմացութիւնների պատճառ է դառնում, որ տղամարդուն ստիպում է յարմար դէպքում յարձակուել կնոջ վրայ, իսկ վերջինիս՝ պաշտպանուել այդ յարձակումից...

Մշտական խաղաղութիւնն ու հաշտութիւնը կը-թագաւորէ միայն այն ժամանակ, երբ կանայք ու տղամարդիկ կը ճանաչեն միմիանց և ընկերներ կդառնան, երբ նրանք մի և նոյն ճանապարհով կծանօթանան կեանքի հետ, երբ կհասկանան իրանց ընդհանուր շահերը և ձեռք ձեռքի տուած կեանքի ասպարէզը կմտնեն, որպէս զի երջանիկ ապրեն, սիրեն ու աշխատեն։

Աշխատանքը կեանք է։ Մենք չենք կարող երջանիկ լինել եթէ չհասկանանք, որ երջանկութիւնը համերաշխ աշխատութեան մէջն է։

Մեզ համար չկայ փրկութիւն, քանի որ կինը տանջուում է տղամարդու լծի տակ, քանի որ նա չի վայելում իւր ազատ իրաւունքները։

Հարկաւոր է աւելի սէր, աւելի արդարութիւն և հաւասարութիւն։

ԿԻՆԸ ԵՒ ՏՂԱՄԱՐԴԸ

Ա.

Կնոջ դրութիւնը մեծ նշանակութիւն ունի մարդկութեան կանոնաւոր և աջող զարգացման համար։

Անկասկած բարքերն աւելի մաքուր, աւելի լաւ են այն երկրներում, որտեղ կինն աւելի ազատ ու անկախ է տղամարդուց, քան թէ այն տեղերում, որտեղ նա գտնւում է փակուած դրութեան մէջ, որտեղ յարդանքի մասին խօսք անդամ չի կարող լինել։

Նոյն իսկ մեր մէջ շատ տեղերում կնոջը համարում են սատանայի ծնունդ, որի պատճառով մարդկային ազգը մեղքերի մէջ է ընկել. շատ տեղերում էլ կարծում են, թէ նա թոյլ և անմաքուր արարած է, որ բնականից նշանակուած է տղամարդու ստրկինը, ստրուկը լինելու։

Նա երբէք ինքնուրոյն չէ եղել, երբէք իրաւունքներ չէ ունեցել իւր անձի և ստացուածքի տէրը լինելու։

Ծնողները իրանց հարստութիւնը—ժառանգութիւնն ուրիշներին յանձնելիս՝ սովորաբար մեծ մասը թողնում են որդիներին, իսկ կանայք իրանց ամուսինների մահից յետոյ ընդհանրապէս մնում են մի կարգ հացի կարօտ:

Աղջիկը մինչև ամուսնանալը՝ անպայման ենթարկվում է հօր ազդեցութեան, իսկ ամուսնանալուց յետոյ ընկնում է ամուսնու բացարձակ իշխանութեան տակ:

Եւ այդ ամուսնութիւնը շատ անգամ կատարւում է միմիայն ծնողների ստիպմամբ, խեղճ օրիորդը նոյն իսկ չի տեսնում, չի ճանաչում ապագայ ամուսնուն: Ամօթ մեզ...

Կնոջ ազատութիւնը սահմանափակ է նոյն իսկ տան մէջ: Նա իրաւունք չունի տանից դուրս գալու, երբ ամուսնու մօտ դեռ հիւրեր են նստած:

Արևելեան յետամնաց ազգերի այս անբարոյական ու նեղ հայեացքը, անշուշտ, հետևանք է այն ապականուած հասկացողութեան, թէ կինը բանական էակ չէ, թէ նա հոգի չունի:

Այսպիսի հասկացողութիւն ունէին նաև միջնադարեան ասատուածաբանները, որոնք դեռ աշխատում էլ էին ապացուցանել այդ անհիմն ենթադրութիւնը:

Այն խիստ հսկողութիւնը, որի տակ պահում են կնոջը, ցոյց է տալիս ոչ թէ կնոջ բնածին անբարոյականութիւնը, այլ տղամարդու անբարոյականութիւնը:

Կինը զուրկ է խելացի կրթութիւնից. այդպիսի պայմաններում նա կարող է արդեօք իսկապէս գործնական քաղաքացիներ պատրաստել հասարակութեան և ամբողջ մարդկութեան համար:

Անշուշտ այս տեսակ պայմանները դարերի ընթացքում խոչնդոտ են եղել շատ ազգերի բարձր զարգացմանը:

Այս փաստն ապացուցանելու համար, բաւական է յիշել Չինաստանը, Պարսկաստանը, Թիւրքիան և այլն:

Այդ երկրներում, կարելի է ասել, կնոջ վրայ նայում են, ոչ թէ ինչպէս մարդու վրայ, այլ ինչպէս կենդանու վրայ, որը չունի իւր «ես»-ը, չունի իւր սեպհական ձայնը:

Նա պարտաւոր է անտրտունջ կատարել իւր տիրոջ բոլոր քմահաճոյքը և դորա հետ միասին բոլոր ծանր գործերը:

Դէպի կինն ունեցած այդ անարդար վերաբերմունքի պատճառներից մէկը թաղնուած է ոգորմելի կրթութեան և քաղաքակրթութեան մէջ:

Նոյն իսկ հասարակութեան ամենացածր խաւի աղամարդը—երկրագործ, թէ մշակ, որի կեանքը անցնում է բացառապէս մարմնական աշխատանքով, յենուելով իւր սեռի իրաւունքի, իւր օրինական և քաղաքացիական ոյժի վրայ, աւելի բարձր է կանգնած լինում, քան թէ կրթուած ու զարգացած կինը, որը զրկուած է իրաւունքներից, ինչպէս բոլոր կանայք:

Թէև կրթուած համարուող դասակարգի մէջ կնոջ դրութիւնը անցեալի համեմատութեամբ բար-

ւոքուել է, բայց այստեղ էլ ամուսինը շատ անդամ չի ընդունում կնոջ ինքնուրոյն անձնաւորութիւնը, նրա վրայ նայում է ինչպէս զուարճանալու միջոցի վրայ, որովհետև մարդու և կնոջ մէջ չկայ բարոյական կապ։

Պատմութիւնն ու կեանքի փորձերը ցոյց են տուել, որ շատ կանայք իրանց խելքով աւելի բարձր են եղել քան թէ նրանց ախոյեան աղամարդիկ։

Համարեա չկայ մտաւոր գործունէութեան մի ասպարէզ, որտեղ կինը վերին աստիճանի կատարելագործման չը հասնէ, ուստի խանգարել նրա ազատ զարգացումը, արգելել նրա ընդունակութիւնների աճեցումը միայն այն պատճառով, որ նա կին է, դա ակներև անարդարութիւն է։

Ընդհանրապէս օգտակար կլինէր հասարակութեանը, եթէ կինը կարողանար (եթէ թոյլ տային) զարգացնել իւր բազմակողմանի ընդունակութիւնները, որոնք դժբաղդաբար այժմ մնում են անմշակ։

Մենք աղամարդիկս թոյլ ենք, կորցրել ենք գրեթէ շատ բան, ուրեմն ազատութիւն տանք մեր կանանց, գուցէ նրանք բաց անեն մեր առաջ բաղդաւորութեան ու ճշմարիտ կեանքի ուղիղ ճանապարհը։

Որքա՞ն կանայք կան տրամքի կամ կոյս, որ ներկայումս ձանձրանում են անգործութիւնից և այդ պատճառով էլ հալ ու մաշ են լինում զանազան հիւանդութիւններից՝ ջղայնութիւնից, հիստերիկայից և այլն։

Այդպիսի զրութիւն ստիպում է կնոջը անձնատուր լինել անգործութեան, զարդ ու զարդարանքի յեսևից ընկնել և բամբասանքով զբաղուել։

Դրանից էլ առաջ են գալիս վէճեր և ընտանեկան ընդհարումներ։

Սոնա այդ է կնոջ ճակատագիրը, այդպէս է նրա սոցիալական զրութիւնը։

Մեզանում կինը պատրաստուած չէ դժուար զէպքերում ամուսնուն օգնելու, չկայ ընդհանուր շահեր մարդու և կնոջ մէջ։

Տեսնում ենք շատ անդամ ընտանիքի զլուխն ու միակ կերակրողը ակարանում—մեռնում է, իսկ նրա ընտանիքը մնում է անտէր, անպաշտպան և նոյն իսկ մի կտոր չոր հացի կարօտ։

Ի՞նչպէս կարելի է, մի՞թէ ամուսինը թոյլ կտայ կնոջը իւր գործերին խառնուելու։ Չէ՞ որ կինը անբան տրտրած է, չէ՞ որ նա ոչինչ չի հասկանում...

Սակայն ցաւօք սրտի պէտք է նկատել, որ մեր կանանց ստուար մեծամասնութիւնը երբէք չի վիրաւորում իր ներկայ զրութիւնից։

Նրանք կարծես չեն էլ ցանկանում որ և է փոփոխութիւն մտցնել իրանց վիճակի մէջ։

Շատ հասկանալի է, որ կանայք իրանք պէտք է եռանդով կռիւ մղեն իրանց ստրկական զրութիւնից ազատուելու համար։

Բոլորովին այլ է իրականութիւնը այնտեղ, որտեղ արդէն սկսուել է կռիւը, (թող լինի դա առանձին ընտանիքներում)։

Պարզ երևում է, որ մի կողմից այդպիսի կռուով ձեռք բերուած ազատութիւնը, իսկ միւս կողմից ուսումն ու կրթութիւնը զարկ են տուել կնոջ առաջադիմութեանը, բաց են արել նրա աչքերը: Նա այժմ այլ կերպ է հասկանում իւր բարոյական պարտականութիւնները, այլ կերպ է կատարում իւր դիտական ու հասարակական դերը— յօդուտ մարդկութեան, յանուն գաղափարի:

Մենք պէտք է միշտ հետևենք ճշմարիտ քաղաքակրթութեանը, որովհետև կեղծ ու սխալ քաղաքակրթութիւնը պահանջում է շատ զոհեր, պատճառում է շատ ծիծաղելի ու տխուր երևոյթներ: Որտեղ չկան սխալներ...

Բ.

Արդեօք ի՞նչ պէտք է անի կինը, ի՞նչ կարող է նա անել. արդեօք նա պարտաւոր է մասնակցել հասարակական գործունէութեանը, թէ միայն իւր ընտանեկան կեանքով պիտի սահմանափակուի:

Ուրեմն այստեղ հարցը կանայի աշխատանքի մասին է, այն էլ բարձր ու կրթուած շրջաններում:

Ամէն մի անհատ առանց սեռի խարութեան պարտաւոր է աշխատել: Առանց աշխատանքի հայ չեն ստանայ. առանց աշխատանքի իրաւունք չունիս ապրելու.—ահա դա է ժողովրդական կեանքի ակսիոմն:

Հասարակութեան ստորին խաւերում կինը ոչ միայն իրաւունք ունի, այլ և պարտաւոր է աշխատել, և նա աշխատում է առաւօտից մինչև երեկոյ:

Մտաւոր աշխատութիւնը հասարակ ժողովրդի համար դոյութիւն չունի և այդ պատճառով էլ նա չի հետաքրքրուում նրանով:

Ուրեմն այստեղ կինը հեռու է մտաւոր աշխատութիւնից:

Դրանից հեռու են և այն կանայք, որոնք սիրում են աշխարհային հաճոյքներ, որոնք ամենալուրջ կերպով մտածում են միայն խնճոյքների, բալների, պատուճանքի ու իրանց երեսի դոյնի մասին:

Մի՞թէ նրանց համար միևնոյն չէ, թէ արդեօք կինը կարող է դառնալ բժիշկ, դեղագործ, պրոֆեսոր և այլն:

Դիտութիւնը բարիք է. ուսումը անհրաժեշտ է ամէն մի անհատի: Դրանք անվիճելի ճշմարտութիւններ են և նրանց կրկնելն անդամ ամօթ է. բայց մարդ ստիպուած է այդ բանն անել, երբ խօսքը կնոջ մասին է:

Կանանց կրթութեան մասին ամենից շատ պիտի հոգան նրանք, որոնք կնոջը ստոր արարած են համարում, որոնք սիրում են անուանել նրան «դեղեցիկ սեռ», որը թոյլ է մտաւոր և ֆիզիկական տեսակէտից:

Թոյլ խելքին աւելի շատ է հարկաւոր զարդացում, որովհետև հակառակ դէպքում նա չի կարողանալ խելացի կերպով գործ կատարել, բան չի հասկանալ, չի զանազանիլ ճշմարտութիւնը ստից, բարիքը չարիքից, վերջապէս չի ունենալ իւր համար բարոյական ամուր հիմք:

Զի՞ որ այս վերջին հանգամանքը պտռնկութեան ու ընտանեկան կեանքի քայքայման պատճառներից մէկն է։

Ենթադրենք, թէ կնոջ ուղեղը տղամարդու ուղեղից թեթև է, թէ նրա մասնաւոր ընդունակութիւնները թոյլ են և ստեղծագործելու անընդունակ։

Մի՞թէ դրանից հետևում է, թէ մենք պէտք է նրան թողնենք տգիտութեան մէջ և շահագործենք նրա թուլութիւնը, անկրթութիւնը։

Ո՞վ կարող է ուրանալ, որ մեզանում չկան կանանց տգիտութեան պաշտպաններ։

Գ.

Մարդ չի հասկանում, թէ ինչո՞ւ մի որ և է դիտութիւն տղայի համար օգտակար է համարւում։ իսկ աղջկայ համար՝ վնասակար։

Ոչ, կրթութիւնը երկու սեռի համար էլ միատեսակ պէտք է լինի։ բազմակողմանի ու լայն կրթութիւնը շատ օգտակար է դեղեցիկ սեռին։ Զի՞ որ կիսակրթութիւնն աւելի վնասակար է քան տգիտութիւնը, ինչպէս որ մեզանում է այժմ։

Առանձին նշանակութիւն չունի, թէ ի՞նչ են սովորեցնում։ աւելի կարևորն այն է՝ թէ ի՞նչպէս են սովորեցնում։

Իսկական բարերար դիտութիւնը բաց է անում աչեզերքի օրէնքները, սերմանում է մարդու սրտի մէջ վսեմ զաղափարներ, պարզում է ճշմարտութիւնը և առաջնորդում է մեզ դէպի բարոյական զարգացումն ու կատարելագործումն։

Գիտութիւնը հայրենիք չունի։ նա պատկանում է ամբողջ աշխարհին, որովհետև համաշխարհային ջանքերի պտուղն է։

Իրաւունք ունինք արդե՞օք, կնոջը զրկելու այդ լոյսից։

Պարտաւոր չենք, արդեօք, ընդհակառակը տալու նրան զարգացումն՝ հասնելու այն միջոցներին, որոնցով ինքներս ենք օգտւում։

Այժմ արդէն Եւրոպայում և մեզանում—Ռուսաստանում կանանց առաջ բաց են շատ ասպարէզներ։

Նա փայլուն կերպով ցոյց տուեց, որ կարող է լաւ բժիշկ ու դեղագործ լինել։ նա շատ աչքի ընկնող ծառայութիւններ արեց մանկավարժական ասպարիզում։ նա անուանի դարձաւ և մեծ հռչակ ստացաւ պատերազմի դաշտում՝ գթութեան քրոջ դերում։

Անցան այն ժամանակները, երբ կնոջ համար պախարակելի էր համարւում արուեստներով պարապելը, գրականութեան մէջ վէպեր և լուրջ յօդուածներ գրելը։

Կարևորն այն չէ, որ կինը վկայական ստանայ և իրաւունք ունենայ պետական ծառայութիւնների մէջ մտնելու, այլ այն է, որ կինը մասնաւորապէս զարգանայ, տղամարդու հետ միատեսակ կրթութիւն ու դաստիարակութիւն ստանայ։

Այս իրողութեան հետ պէտք է հաշտուին բոլորը, նոյն իսկ նրանք, որոնք կնոջ գործունէութիւնը սահմանափակում են ընտանեկան նեղ շրջանում։

Մի՞թէ մեզանում կինը կարող է իւր կոչման բարձրութեանը հասնել, ընտանեկան լաւ դաստիարակ լինել, երբ բոլորովին չի հասկանում ամուսնու գործերը, երբ դաղափար չունի որդիների սովորած առարկաների մասին:

Ամուսնութիւն կոչուող սիրոյ կապի մէջ պէտք է թագաւորէ իրաւունքի հաւասարութիւն, որպէս զի ամուսինները միշտ համերաշխ ու համամիտ լինեն:

Ի՞նչ բաղդաւորութիւն կարող է լինել այնտեղ, որտեղ մարդն ասում է կնոջը. «Լռի՛ր, որովհետև դու ոչինչ չգիտես»,—որտեղ կինը, իրաւի, ծանօթ չէ ամուսնու փայփայած դաղափարներին ու ձգտումներին:

Երբ որ երեխան մեծանայ, մայրը հօր հետ հաւասար իրաւունք ունի նրա համար դպրոց ընտրելու:

Այդ բանն աւելի շուտ մօր գործն է, որովհետև նա աւելի շատ ժամանակ է անցկացրել երեխաների հետ. աւելի լաւ է ուսումնասիրել նրա հոգին, ուստի և աւելի ճիշտ կիմանայ նրա ընդունակութիւնները:

Մայրը կարող է ուղղել որդիների գործունէութիւնը դէպի օգտակարը. նա կարող է նրանց համար յարմար դպրոց ընտրել, եթէ ինքը յիրաւի, կրթուած, զարգացած է և ունի պաշար, պատրաստութիւն:

Դպրոցը չէ՝, որ սովորեցնում է երեխաներին. նրանք աւելի շատ սովորում են տանը—մօրից:

Ասենք թէ դպրոցում նրանց սովորեցնում են թուաբանական խնդիրներ լուծել, սովորեցնում են աշխարհագրութիւն, պատմութիւն. բայց ո՞վ է սովորեցնում սիրել ճշմարտութիւնը, գործել բարութիւն, զոհել կեանքը մերձաւորի համար:

Այս ամենը նրանց կսովորեցնէ զարգացած մայրը:

Նա ամեն օր հաճելի կերպով կըխօսի իր փոքրիկ մանուկների հետ սիրոյ մասին, այն սիրոյ, որից վսեմ բան չկայ աշխարհում. նա նրանց կըհասկացնէ, թէ ինչպէս պէտք է կռուել սեպհական կրքերի հետ, թէ ինչպէս պէտք է օգնել խեղճերին և աղնիւ ու պարտաճանաչ լինել:

Նա կբացատրէ, որ եսականութեան մէջ չկայ բաղդաւորութիւն, որ անհնար է ապրել առանց դաղափարի, առանց հաւատի ու անկեղծ սիրոյ:

Այս բոլորը մայրը կսովորեցնէ և որդիքը նրան կլսեն: Այդպիսով մատաղ սրտերում կհաստատուին բարութեան սերմերը:

Նրանք եղկոր կյիշեն մայրական քաղցր ու բարի խօսքերը: Այդպիսով՝ զարգացած մօր մահից յետոյ էլ նրա հոգին կապրի և միշտ իւր զաւակների խորհրդատուն և առաջնորդը կըլինի:

Դ.

Թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքում կնոջն անհրաժեշտ է զարգացումը:

Կինը պէտք է հասկանայ հասարակութեան մէջ ծագած բոլոր խնդիրները, որքան էլ որ լուրջ

լենին նրանք. նա պէտք է հասկանայ, թէ ի՞նչ է կատարուում իւր շուրջը:

Կինը պէտք է ճանաչէ մարդուն և նրա վերաբերմունքը դէպի արտաքին աշխարհը. նա պէտք է ընդհանուր հասկացողութիւն ունենայ տիեզերքի կազմութեան և մարդու մարմնի մասին:

Ժամանակակից կեանքում մենք շարունակ ընդհարում ենք ունենում իրաւաբանական խնդիրների հետ, շարունակ տեսնում ենք մարդկային աշխատանքի և կապիտալի կռիւը:

Ժողովրդական կեանքի զանազան երևոյթները հասկանալու, նրա բոլոր եզ և էջերը ըմբռնելու համար անհրաժեշտ է ունենալ կանոնաւոր դատողութեան հատատուն հոգ, անհրաժեշտ է ծանօթ լինել իրաւաբանութեան հիմքերի հետ:

Ներկան հասկանալու համար, պէտք է գիտենալ մարդկութեան պատմական անցեալը, պէտք է ծանօթ լինել մարդկային մտքի ընդհանուր ընթացքի հետ:

Սովորական գիտութիւնների տարերքը անհրաժեշտ է գիտենալ իւրաքանչիւր կնոջ համար, եթէ նա ցանկանում է հասնել ներկայ զարգացմանը, եթէ նա ուզում է յետ չմնալ ընդհանուր հոսանքից:

Զարգացումը կարևոր է կնոջ համար, որպէսզի նա հասկանայ շրջապատող մարդկանց, որպէսզի ըմբռնէ թէ ինչումն է կայանում իւր ճշմարիտ կոչումը, թէ նա ինչպիսի դեր պիտի կատարէ մարդկութեան ընդհանուր բարիքի համար և թէ գլխաւորապէս ի՞նչ հարցերում տղամարդու հետ հաւասար իրաւունք պիտի ունենայ:

Այդ ամենը շատ ցանկալի է, որովհետև դրանց շնորհիւ կվերանան կանանց կեանքում մեծ դեր խաղացող տարաձայնութիւններն ու բամբասանքները, որովհետև դրանցով կստեղծուեն ճշմարիտ գործ ու հոգատարութիւն:

Սակայն հէնց այդ պատճառով կնոջ կրթութեան գործին պիտի օգնեն բոլոր այն մարդիկ, որոնք նախանձախնդիր են ընտանեկան ու հասարակական կեանքի ծաղկելուն:

Եթէ դիտութիւնը ընդունում է որպէս բարիք, այն ժամանակ նա պէտք է մատչելի լինի ամենքին, առանց սեռի, կոչման և դասակարգի խտրութեան:

Դժբաղդաբար մենք դեռ չենք հասել այդ ատիճանին, դեռ չունինք այդպիսի գիտակցութիւն:

1003
10068

Ե.

Մարդիկ յաճախ խօսում են կնոջ անկման մասին, բայց արդեօք լսել էք, որ երբ և իցէ տղամարդու անկման մասին էլ խօսք լինի:

Համարեա ոչ. այն վարմունքը, որի անունն է «անկում» սոսկալի բառը, տղամարդու համար միայն մի անմեղ զուարճութիւն է, որը մինչև անգամ անհրաժեշտ է ժամանակ անցկացնելու, նրա բնական պահանջին յագուրդ տալու համար:

Իրանց վարքը կորցրած կանայք չեն ընդունուում ընտանիքներում, իսկ այն տղամարդը, որ ճախրում է ծաղկից ծաղիկ, որ ամեն ամիս, ամեն օր փոխում է իւր սիրային կապերը, որ բոպէական

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
Ա.Ս.Ս.Հ.
7/II 1922

բաւականութեան յետևից է ընկած, նա չի կորցնում կարգին մարդու համբաւը և ցանկալի հիւր է շատ ու շատ ընտանիքներում:

Այդպիսի մարդու ներկայութիւնը չի կեղտոտում, արատաւորում ոչ մի հիւրատուն, եթէ նա լցուած է նոյն իսկ ջահիլ օրիորդներով: Իսկ կինը, բարոյական ճանապարհից քիչ շեղուած կինը, սարսուռ է ազդում դրանց վրայ:

Սակայն բանն էլ հէնց նրանումն է, որ կնոջ առաքինութիւնը և տղամարդու առաքինութիւնը բոլորովին տարբեր բաներ են:

Տարօրինակ է. անմեղութիւնը կնոջ համար առաքինութիւն է և նոյն իսկ պարտականութիւն: Այդ պարտականութիւնից ամենափոքր չափով շեղուելը արդէն յանցանք է:

Իսկ երիտասարդ մարդու անմեղութի՞ւնը, ի՞նչ բան է նա, ինչո՞ւմն է նրա առաքինութիւնը:

Բայց ի՞նչ առաքինութիւն: Տղամարդու անմեղութիւնը յիմարութիւն ու տարօրինակ անխելքութիւն է համարւում, անմեղ երիտասարդի վրայ ծիծաղում են:

Երիտասարդները զոհում են իրանց անմեղութիւնը, որովհետև այդպէս ընդունուած է, այդպէս են անում ամենքը:

«Ես տղամարդ եմ և ինձ ներելի է ամեն ինչ», բացականչում են դրանք:

Մեզ դաստիարակում են այդ տեսակ վայրենի հասկացողութիւններով, նոյնը մենք յանձնում ենք մեր զաւակներին, ամենևին չհոգալով այն մասին,

թէ արդեօք նրանց ճշմարտութիւն ենք սովորեցնում, թէ միջոց ենք տալիս յանցանքը թաղցնելու:

Հոգատար մայրը խստիւ պահպանում է իւր աղջկայ մաքրութիւնը. նա վախենում է, ոչ միայն անվայել վարմունքից, այլ և անվայել խօսքից. խլում է աղջկայ ձեռքից կասկածելի գիրքը, ընդհատում է անտեղի խօսակցութիւնը:

Բայց նոյն հոգատար մայրը փող է տալիս որդուն և ասում:

—Գնա՛ և անձնատուր եղի՛ր կրքերիս, որտեղ և ինչպէս կամենաս, դու տղամարդ ես և պահանջ ես զգում դրանում:

Շա՛տ հարցերում մայրեր այդպէս են վարվում:

Այդ բոլորն առաջ է գալիս կրթութեան ու զարգացման պակասութիւնից, յատկապէս մեր անկրթութիւնից:

Մենք մինչև անգամ հնարել ենք մի սրամիտ դարձուածք:

—Ջահելի յետևից չեն ընկնիլ:

Խօսում է մայրը ժպտալով իւր սիրելի որդոց անմեղ սիրահարութիւնների և քէֆերի մասին:

Ոչինչ, կամուսնանայ և կուզդուի, ջահելութիւն է, կանցնի:

Այդպիսով մանուկ հասակից հրէշացած, բարոյապէս այլանդակուած տղամարդիկ կապւում են ջահիլ կայտառ, կեանքի ծարաւի օրիորդների հետ և սևացնում են նրանց օրերը: Այսպէս է կատարւում այժմեան ամուսնութիւնների մեծ մասը:

Բայց չէ՞ որ ամուսնութիւնը միայն երկու մարմինների կապ չէ, այլ և երկու հոգիների, երկու սրտերի կապ։

Երկու խելք, երկու կեանք կապուում են միանց հետ ընդհանուր գործունէութեան համար։

Այս կապի մէջն է հոգիների միութիւնը, որը իսկապէս աւելի գնահատելի է, քան մարմինների միութիւնը։

Սակայն ճշմարիտ կապ հնարաւոր է, միայն այնտեղ, որտեղ երկու անհատ միանում են յօժարութեամբ, որտեղ նրանց կապերը ամրացած են փոխադարձ մտքերով ու սիրով, որտեղ երկուսն էլ ունին համահաւասար իրաւունքներ և ծառայում են միևնոյն վսեմ նպատակին։

Ամուսիններն իրաւունք ունին միմեանցից միատեսակ պահանջներ անելու։

Տղամարդը իւր ֆիզիքական և մտաւոր առաւելութիւնների պատճառով հէնց սկզբից սարկայրել է կնոջը, ենթարկել է իւր ազդեցութեանը և այդպիսով ձեռք է բերել արտօնաւոր դիրք։ Նա կարողացել է համոզել նրան, որ իբր թէ իրա կազմուածքը բոլորովին այլ ձևակերպութիւն բոլորովին այլ պահանջներ ունի, քան թէ կնոջը։

Այդպիսի անբնական վերաբերմունք դոյութիւն ունի դարերի ընթացքում, սակայն վաղեմութիւնը արդարութեան նշան չէ։

2.

Ճիշտ է մենք իրաւունք ունինք օրիորդներից պահանջելու բարոյական մաքրութիւն ու անմեղութիւն, իրաւունք ունինք նրան չթողնել անառակութիւն անելու, բայց իրաւունք ունի՞նք արդեօք ինքներս արհամարհելու այդ մաքրութիւնն ու անմեղութիւնը, մեզ համար ներելի համարելով այն ամենը, ինչ որ կնոջը թոյլ չի տրւում։

Դրանից դուրս է գալիս, որ մենք ունինք երկու բարոյականութիւն՝ մէկը տղամարդու միւսը կնոջ համար։

Այն վարմունքը, այն գործողութիւնը, որ նախատինք է կնոջ համար, թոյլ է տրւում տղամարդուն. այն սխալանքը, որ արատ է օրիորդի համար, երիտասարդի պարծանքն է համարւում։

Բարոյական մի չափը մեզ ենք յարմարեցնում, միւսը՝ կնոջը։

Գուցէ մենք կարողանայինք հաշտուել մեր երկու բարոյականութեան հետ, եթէ չզգայինք այս տեսակ աշխարհահայեացքի տխուր հետևանքները, եթէ չտեսնէինք հասարակութեան մէջ մեծաքուր քայքայման սարսափելի նշանները։

Յանցանքը սերնդից սերունդ անցնելով, ի հարկէ, չի պակասում այլ զարգանում է։

Արատաւոր ծնողները ծնում են աւելի արատաւոր զաւակներ։

Իսկ ի՞նչ կարելի է յուսալ այն հասարակութիւնից, որ վարակուած է մարմնական ու հոգեկան ամէն տեսակ ախտերով:

Նայենք մեր շուրջը և տեսնենք, թէ ի՞նչ է կատարւում չորս կողմը:

Անառակութեան շոշափելի արդիւնքը՝ ընդհանուր անզօրութիւնն է, — որը մեր թուլութեան պատճառներից մէկն է:

Այս երևոյթը նկատւում է ամէն տեղ, թէ՝ գրականութեան, թէ՝ գիտութեան և թէ՝ արուեստների մէջ: Ամէն տեղ նկատւում է պակասամտութիւն. մի՞թէ կարող են տաղանդներ ածել ընդհանուր թուլութեան հողի վրայ:

Մենք այժ չունինք մեր համոզմունքները պաշտպանելու, այժ չունինք ընդհանուր գործի համար միանալու:

Թէթև բացառութեամբ կարելի է ասել, որ կեղծիքի մէջ է ապրում մեր ամբողջ հասարակութիւնը, որ խաբէութեան վրայ է հիմնուած աղամարդու վերաբերմունքը դէպի կինը:

Մենք պնդում ենք, որ իբր թէ սիրում ենք մեր մերձաւորներին, սիրում ենք մարդկութիւնը, բայց դա սուտ է, մենք միայն մեզ ենք սիրում:

Երիտասարդը հաւատացնում է օրիորդին, որ իբր թէ իւր համար ընկերուհի է որոնում: բայց դա ճիշտ չէ. (կարելի է ասել). նրան ոչ թէ բարեկամուհի է պէտք, այլ կանայի մարմինը: Եւ եթէ պսակվում էլ են, ղլխաւոր դերը խաղում է փողը:

Մենք ասում ենք, որ յարգում ենք կնոջը— այդ էլ սուտ է:

Չեն յարգում նրան, որին արժանի չեն համարում կրթուելու. չեն յարգում նրան, որի ամենաիրաւացի պահանջները մերժում են, որի ամենաբնական իրաւունքները բացասում են:

Եթէ սիրում են մէկին, այն ժամանակ նրա անօգնական ու անել դրութիւնից չեն օգտուիլ, սիրած արարածին չեն մատնիլ անառակութեան և չեն ծաղրիլ նրա ամենանուիրական զգացմունքները:

Մենք կարում ենք խեղճ օրիորդի աշխատանքը, ստիպում ենք նրան մոռանալ պատիւն ու խիղճը, դատափետում ենք և վայրենի կերպով ծիծաղում նրա կանացի թուլութեան վրայ: Ծիծաղում ենք, որ նա չկարողացաւ կեանքի հոսանքին դիմադրել, որ մեր կեղտոտ գրկախառնութիւնը դերազասեց սովամահից:

Մենք գոռում ենք կնոջ ստորութիւնների մասին, որոնք պղծում են մեր փողոցները. արտնջում, զայրանում ենք, որ կինը ծախու ապրանք է դարձել, աղաղակում ենք՝— «Ո՜հ, ամօթ, նախատինք». իսկ այդ ամօթի մէջ զգում ենք միայն մեր սեփական ամօթը:

Մենք բարոյապէս կոպտացել ենք, բայց բարեբաղդաբար կանայք դեռ չեն կոշտացել:

Նրանք մեզ պէտք է ասեն.— «ապրեցէ՛ք այնպէս, ինչպէս որ մեզանից էք պահանջում: դուք էլ կատարեցէ՛ք այդ ամենը, ինչ որ մեզանից էք սպասում»:

Կինը պէտք է հասկանայ իր իրաւունքները, պէտք է հրաժարուի հին հայեացքներից, որոնք հէնց իրա համար էլ ձեռնտու չեն։

Կնոջը վիճակուած է յամառ ու երկարատև կռիւ մղել։ Այո՛, անխուսափելի է կռիւը և առանց կռուի կեանքը մեռած է։

Կինը պիտի յաղթէ. նա յաղթանակով պիտի դուրս գայ առաջիկայ կռուից, նրանն է փառքի պսակը։

Կնոջը վիճակուած է նոր կեանք ու եռանդ ներշնչել զառամած աշխարհին. նա պիտի մեղ փրկէ անխուսափելի կործանից։

Թո՛ղ ամրանայ կինը, թո՛ղ նա զարգանայ և գիտութեամբ զինուած պաշտպան կանգնի իր իրաւունքի հաւասարութեան, թո՛ղ նա մեղ առաջնորդէ դէպի լոյսը, դէպի բարին ու ճշմարիտը, դէպի լաւն ու գեղեցիկը։

Բայց կինը կարո՞ղ է, արդեօք, այս ամենը կատարել։ Տեսնենք թէ այդ մասին ի՞նչ է ասում ժամանակակից գիտութիւնն։

Այս ուղղութեամբ ի միջի այլոց աշխատել են նշանաւոր գիտնականներ, փիլիսոփաներ և բնագէտներ՝ Բիւխներ, Ելլիս, Բոկլ, Դարվին, Բեբել, Տոպինար, Վենդ, Լոմբրոզո, Ռիբո, Սպենսեր և ուրիշները։

Է.

Ներկայումս թէ Եւրոպայում և թէ Ռուսաստանում կանանց հարցի առիթով սկսուել է հասկական մի շարժում, որի նպատակն է՝ պաշտպանել կնոջ իրաւունքները տղամարդու իրաւունքների դէմ, տալ նրան գործունէութեան նոր շրջան, նոր պարտաւորութիւններով։

Բացի այդ հասարակական շարժումից կայ և մի գիտական շարժում, որի նպատակն է պարզել կնոջ ու տղամարդու մէջ եղած տարբերութիւնը թէ ֆիզիքական և թէ հոգեկան տեսակէտից, ցոյց տալ նրանց կազմուածքի զանազանութիւնը և այլն։

Շատ-շատերը հաւատացնում են, որ կանայք ֆիզիքական ու մտաւոր կողմից ստոր են տղամարդկանցից, բայց այդ դեռ մեղ իրաւունք չի տալիս, որ ուրանանք կնոջ քաղաքացիական հաւասար իրաւունքը, նրանց համար կարևոր չը համարենք լուրջ միջնակարգ և բարձր կրթութիւնը։

Նկատուած թերութեան պատճառը այն ճրնշուած դրութիւնն է, որի մէջ գտնուում է կինը տղամարդկանց շնորհիւ։

Կարծել, թէ կինը մի տեսակ ստոր ու անկատար արարած է, դա՛ շատ մեծ սխալ է, որ գործում են յետամնաց ու անկիրթ մարդիկ և ընդհանրապէս մարդկութեան թշնամիները։

Դիմենք ֆիզիոլոգիային։

Բոլոր քաղաքակիրթ ազգերի մէջ կինը հասակով փոքր է մարդուց և քաշը թեթև, բացառութիւն է կազմում 13—14 տարեկան հասակը, երբ աղջիկը սովորաբար նոյն հասակի տղայից աւելի ծանր ու աւելի բարձրահասակ է լինում։

Կնոջ մարմնի դիրքը տղամարդու մարմնի նըման ուղղաձիգ չէ. նա գլուխը մի փոքր ցած է բռնում, իսկ շարժումներն անհաւասար են։

Աւելի բնորոշ առանձնայատկութիւններից մէկն այն է, որ կնոջ յուցամատը չորրորդ մատից երկար է։ Շատ քիչ տղամարդկանց մատներն այդպէս են լինում, այն ինչ կանանց մէջ դա յաճախ է պատահում..

Այդպիսի կազմութեամբ կնոջ ձեռքն աւելի դեղեցիկ է, քան թէ տղամարդունը և այդ առանձնայատկութիւնը կարող է բարձր զարգացման նշան համարուել, որովհետև նրանից զուրկ են կապիկները և վայրենի մարդիկ։

Կնոջ ձայնակապերն աւելի կարճ են, քան թէ տղամարդունը, ուստի նրա ձայնն աւելի սուր, աւելի բարձր է։

Կնոջ կոկորդն աւելի փոքր է և աւելի բարձր է դեսեղուած, քան թէ տղամարդունը։

Նրա վահանաձև դեղձերը բաւական մեծ են։ Կնոջ արիւնը պարունակում է ջրի մեծ տոկոս. առ հասարակ բոլոր կանայք տղամարդկանցից աւելի սակաւարիւն են։ Արեան զարկը մի րոպէում 8—12-ով աւելի է, քան թէ տղամարդկանցը։

Եւրոպայում և Ամերիկայում հարիւր աղջկայ դէմ ծնւում են հարիւր հինգ տղաներ. իսկ մահացութեան դէպքերը տղամարդկանց մէջ աւելի են։ Դա արդէն ապացուցանում է, որ կանայք դիմանում են ցաւերի։

Նրանք ամեն տեսակ անդամահատութեան տղամարդուց լաւ են դիմանում։ Նրանց վէրքերը աւելի շուտ են առողջանում։

Այս երևոյթը, ի միջի այլոց, ցոյց է տալիս, որ տղամարդիկ աւելի ալկոհոլիկներ են, քան թէ կանայք։

Կանայք այնպէս շուտ չեն ծերանում, ինչպէս տղամարդիկ, երկար էլ ապրում են. հարիւր տարեկան ծերունիների մէջ կանանց թիւն երկու անդամ աւելի են տղամարդկանցից։

Կանանց ձեռքերն ու ոտքերն աւելի են ծառայում, քան թէ տղամարդկանցը. նրանց մազերն աւելի ուշ են սպիտակում։ Ծերութեան ժամանակ նրանք սակաւ են տանջուում լսելիքի տեսանելիքի և յիշողութեան թուլութիւնից։

Մի խօսքով հակառակ այնքան ընդհանրացած կարծիքին, կինն անհամեմատ աւելի դիմացկուն է և կենսական ոյժերի աւելի մեծ պաշար ունի, քան տղամարդը։

Այլասերման այլանդակութեան և բնական տիպից ամեն կերպ հեռանալու նշաններ կանանց մէջ աւելի սակաւ են պատահում, քան թէ տղամարդկանց մէջ։

Կանանց սկսաւառակն աւելի փոքր է, քան տղամարդունը. ճակատը հարթ է և ուղղաձիգ. նա չունի դուրս ընկած մասեր և աւելի զարգացած է։ Դրա փոխարէն ծոծրակի դուրս ընկած մասը համեմատաբար քիչ է զարգացած։

Կանանց ներքին ծնօտն փոքր ու կլոր է, իսկ դէմքը գլխի մեծութեան համեմատութեամբ մի քիչ փոքր է։

Բ.

Վաղուց է, որ կնոջ ուղերը զիտնականների հետաքրքիրութեան առարկա է դարձել և շատ վէճերի ու բանակռիւների առիթ է տուել։

Բայց խնդիրը, գոնէ գլխաւոր կէտերում, արդէն մօտենում է վախճանին։

Կնոջ ուղեղը տղամարդու ուղեղից քիչ է քաշում։ Բայց այս հանգամանքը դեռ ոչինչ չի ապացուցանում, որովհետև յայտնի է, որ տղամարդու քաշն ու հասակն էլ աւելի է կնոջ քաշից ու հասակից։

Եթէ մենք վերցնենք կնոջ ուղեղի քաշը և նրա հասակի հետ համեմատենք, այն ժամանակ շատ կարելի է գտնենք, որ նրա ուղեղը աւելի մեծ է, քան տղամարդունը։

Բայց եթէ մենք համեմատենք ուղեղի քաշը մարմնի քաշի հետ, որ աւելի ուղիղ կըլինի, այն ժամանակ կերևայ, որ չկայ ոչ մի տարբերութիւն երկու սեռերի մէջ, իսկ եթէ լինի էլ, դա միայն կնոջ օգտին է։

Ընդհանրապէս կնոջ և տղամարդու ուղեղի մէջ նկատելի տարբերութիւն չկայ, իսկ եթէ լինի էլ, կլինի յօդուտ կնոջ։

Կնոջ մտաւոր ընդունակութիւնները գնահատելու համար, տուելի կարևոր է ուղեղի մասերը առանձին վերցնել և իրար հետ համեմատել։

Հակառակ նախկին ենթադրութեան, կանանց մեծ ուղեղի կիսագնդերը ճակատի կողմն աւելի են հաւաքուած, քան տղամարդունը։

Նոյնը կարելի է ասել և ծոծրակի մասերի վերաբերմամբ։

Իսկ ինչ վերաբերում է կողմնային գագաթնային հանդոյցներին (մասերին), նրանք մի քիչ պակաս են։

Այս բանը (գագաթնային շրջակայքի վատ զարգացումը) բացատրում է նրանով, որ կանանց արիւնը աւելի արագ է հոսում ուղեղի մէջ, քան թէ տղամարդկանցը։

Այսպիսի ձևերի շնորհիւ, մի քանի զիտնականներ ենթադրում են, որ կանայք պատկանում են երեխաների տիպին, սակայն այդ տիպը ցեղի իսկական տիպ է, աւելի կատարեալ, քան տղամարդու տիպը։

Համարեա երևում է, որ կանանց մարմնական առանձնայատկութիւնների մեծ մասը նշան է երեխայական կազմուածքի, երեխայական բնութեան։

Իսկ ինչ վերաբերում է կանանց զգայարաններին, պէտք է նկատել, որ փորձերն ու դիտողութիւններն երբէք չեն հաստատում տարածուած այն կարծիքը, թէ կիներն անհամեմատ աւելի զգայուն է, քան տղամարդը, թէև ինչպէս հաւատացնում է յայտնի զիտնական Լոմբրոզո, կնոջ ճաշակն աւելի նուրբ է, քան թէ տղամարդունը։

Առայժմ շատ զգոյշ կերպով պէտք է կարծիք յայտնել երկու սեռերի հինգ զգայարանքների մասին։

Հաւելօն էլլիս և ուրիշ դիտնականներ եկել են այն եզրակացութեան, որ առհասարակ կանայի դիւրազգացութիւնն ու ջղայնութիւնն են պատճառ դարձել այն տարածուած կարծիքի, որ իբր թէ կնոջ հինգ զգայարանքներն աւելի զգայուն են, քան տղամարդունը:

Դա սխալ կարծիք է: Նոյնպէս սխալ է և այն կարծիքը, թէ կանայք բոլոր մեքենայական աշխատանքների մէջ աչքի են ընկնում իրանց ճարպիկութեամբ, այն ինչ տղամարդը յետ է մնում նրանցից: Հարկաւոր է միայն դիտել կանանց գործերն ու կատարած աշխատանքները, որպէս զի սխալն ըմբռնենք:

Այսպէս օրինակ, ծխախոտի գործարաններում կոպիտ աշխատանքները կանայք են կատարում, իսկ նուրբ աշխատանքները՝ տղամարդիկ:

Թ.

Այժմ անցնենք շատ անգամ կրկնուած հարցին, այսինքն երկու սեռերի մտաւոր ընդունակութիւնների տարբերութեանը:

Բայց մի՞թէ գոյութիւն ունի այդպիսի տարբերութիւն...

Տեսնենք:

Կինն ամեն ինչ ըմբռնում է աւելի շուտ, քան տղամարդը:

Որ և է առարկայ ուսումնասիրելիս՝ կինն աւելի շուտ է ըմբռնում ամբողջութիւնն ու խմբե-

ը, իսկ մանրամասնութիւնները նա իւրացնում է աւելի վատ, քան տղամարդը:

Բոլոր առարկաների վրայ նա նայում է բացառապէս իւր հայեցակէտով, իւր անձնական փորձերի լուսաբանութիւնով, սեպհական ցանկութիւններով և նախապաշարմունքներով:

Կանանց զգացմունքների ուժգին ազդեցութեամբ՝ առարկաների մասին ունեցած առողջ դատողութիւն աղօտանում է: Այդպէս չեն տղամարդիկ:

Նրանք աւելի լուրջ, աւելի սառնասիրտ կերպով են վերաբերւում դէպի հարցը:

Սոնա հէնց դա է պատճառը, որ կանայք աւելի վատ քննադատներ են լինում, քան տղամարդիկ, որ կանանց մէջ դժուար է անկողմնապահ քննադատ գտնելը:

Եթէ պահանջենք, որ հինգ կին և նոյնքան տղամարդ մի որ և է բան դրեն, այն ժամանակ դեռ քսան հինգ խօսք չգրած՝ մենք կնկատենք, որ կանայք նիւթը դասաւորել են տարածութեան կարգով, իսկ տղամարդիկ՝ ժամանակի կարգով:

Կինն աւելի պարզ նկարագրում է այն առարկան, որ գտնում է իւր շուրջը, յետոյ աւելի ու աւելի հեռուն, իսկ տղամարդը կրսկսի նկարագրել պատմական փաստերը ժամանակի կարգով, կամ կպատմէ դէպքերը, թէկուզ աշխարհի ստեղծագործութիւնից սկսած մինչև մեր օրերը:

Աւելի կարճն ասած, կնոջ աշխատանքի մէջ նկատելի է տեսողութեան զօրութիւն, իսկ տղամարդունը՝ խելքի ոյժ (Լօժէ):

Տղամարդն աշխատում է բոլորը միատեղ ամփոփել առանց հոգալու մանրամասնութիւնների ու համաչափութեան մասին:

Կինն ընդհակառակը աւելի քիչ է ուշադրութիւն դարձնում հիմնական նպատակի վրայ: Նա ամեն կերպ աշխատում է, որ իւր նկարագրած իւրաքանչիւր առարկան մի ամբողջութիւն կազմէ և շրջապատողների հետ ներդաշնակ լինի:

Իսկ ինչ վերաբերում է յիշողութեանը, այդ խնդրում կինը անհամեմատ բարձր է կանգնած, քան տղամարդը:

Փորձերը ցոյց են տուել, որ ուսանողներից աւելի լաւ յիշողութիւն են ունեցել ուսանողուհիները:

Ժ.

Կանայք մի որ և է բան աւելի շատ են ըմբռնում, քան տղամարդիկ, բայց երբ հարկաւոր է եզրակացութիւններ դուրս բերել, այնտեղ յետ են մնում, կաղում են:

Առհասարակ կանայք աւելի շատ են հետաքրքրւում պատասխան առարկաներով, վերջացած նիւթերով:

Ճիշտ է, արուեստ, գիտութիւն բանաստեղծութիւն, նկարչութիւն և այլն, առաջ են գնացել ու զարգացել գլխաւորապէս տղամարդկանց ջանքերով:

Բայց չէ՞ որ կանանց ասպարէզ չեն տուել, չէ՞ որ ամբողջ դարերի ընթացքում նրանց խաւարի

քողի տակ են պահել: Այնուամենայնիւ կանայք բարբեր ազդեցութիւն են ունեցել գիտութիւնների և արուեստների վրայ:

Մանկավարժական ասպարիզում տղամարդու հետ համահաւասար, թերևս աւելի մեծ աջողութեամբ, աշխատում է կինը, որպէս վարժուհի, որպէս դաստիարակչուհի:

Բայց ինչ որ կինը կորցնում է խորը գիտութիւն և միտք չունենալուց, նա նոյնը ձեռք է բերում իր արագ ըմբռնումով:

Նա դերազանցում է տղամարդուն իր տակտով. նա մեծ ճարպիկութեամբ դուրս է գալիս դժուար դրութիւնից: Նա աւելի ընդունակ է լեզուներ սովորելու, քան տղամարդը:

Աղջիկները աւելի շուտ են սկսում խօսել, քան տղաները,

Հասարակ ժողովրդի և տգէտ դասակարգի կինը կարողանում է ամուսնուց աւելի պարզ, աւելի հասկանալի կերպով արտայայտել իր մտքերը:

Փորձով նկատուած է, որ այն ուսումնարաններում, որտեղ միասին սովորում են տղաներն ու աղջիկները, տղամարդիկ ու կանայք, վերջիններն առաջիններից աւելի աշխատասէր ու տոկուն են եղել իսկ ընդունակութեան կողմից նրանցից յետ են մնացել:

Առանձին համբերութիւն պահանջող աշխատանքի մէջ կինը տղամարդուց աւելի պիտանի է, բայց երկարատև ու ծանր աշխատութեան համար, որ պահանջում է անպայման տոկունութիւն, դի-

մացկոտութիւն, կինը տղամարդուն չի կարող հասնել,

Կնոջ միտքը սիրով թափառում է աւելի հին ճանապարհներով, քան թէ նոր, այն ինչ տղամարդը նորերի յեսւից է ընկնում: կինը կրկնում է հին գիտեցածը, իսկ տղամարդը նորն է ստեղծում:

Կնոջը դուր է գալիս այն, ինչ որ հին է, փորձուած է, որին բոլորն ընտելացել են:

Իսկ տղամարդը միշտ երևակայում է անյայտ իրերի մասին, միշտ աշխատում է նորոգել հինը, միշտ փորձում է նոր ճանապարհներ գտնել, նոր գաղափարներ ստեղծել:

ԺԱ.

Կանանց և տղամարդկանց մէջ զոյութիւն ունեցող ամենամեծ տարբերութիւններից մէկն այն է, որ կանայք աւելի զգայուն են քան թէ տղամարդիկ:

Զգացմունքների զանազան ձևի արտայայտութիւնները և այն փոփոխութիւնները, որ առաջ են գալիս հոգեկան յուզմունքներից ու զրգիռներից, օրինակ ծիծաղը, աղաղակը, դէմքի կարմրելը, սրտի արագ բաբախելը, այդ բոլորը առհասարակ աւելի շատ նկատւում է կանանց վրայ, քան թէ տղամարդկանց:

Ընդհանրապէս կանանց դէմքն աւելի շարժուն է և շատ լաւ է ցոլացնում նրանց հոգեկան դրութիւնը:

Կանայք աւելի յաճախ են ընկնում այնպիսի անբնական հոգեկան վիճակի մէջ, ինչպիսին է հիստերիկա, որ սերտ կապ ունի նեարդերի չափազանց գրգռուելու հետ:

Վհուկ «ճատու պառաւ» խօսքը միայն կանանց է տրւում, որովհետև միայն կանայք իրանց անբնական հոգեկան դրութիւններով կարողանում են զանազան նախապաշարմունքներ առաջացնել:

Սէր ու համակրութիւն, կարեկցութիւն ու գթութիւն չափազանց զարգացած են լինում կանանց մէջ, իսկ դրանցից առաջանում են մարդասիրութիւն և ուրիշ գովելի յատկութիւններ:

Կին մարդը աւելի բարեսէր է, քան տղամարդը. մայրական բնազդն ստիպում է նրան հոգալ ամեն մի թոյլ ու անպաշտպան արարածի մասին:

Նա խնամում է հիւանդներին, յօժարութեամբ ապաստանարան է տալիս աղքատին, ամենևին չմտածելով հեռաւոր հետևանքների մասին. նա միայն հետամուտ է լինում իր անմիջական նպատակին, կերակրում է խեղճին, ներում է աւազակին:

Իսկ ինչ վերաբերում է կանանց բարոյականութեանը, պէտք է ասել, որ նրանց մէջ կան մի քանի աչքի ընկնող գծեր, որոնցով նրանք էապէս տարբերւում են տղամարդկանցից:

Տղամարդկանց մէջ ոճրագործների թիւը հինգվեց անգամ աւելի է, քան թէ կանանց մէջ:

Կնոջ մէջ զարգացած են սիրոյ և բարեգործութեան զգացմունքները, մարմնական թուլութիւնը, բնածին վախկոտութիւնը, տանը հանգիստ ժամանակ անց կացնելու սովորութիւնը—այդ ա-

մեն արդելում և նրան էա էն պահում ոճրագործութիւնից։

Բայց երբ մի անդամ կինը ցած ընկաւ իր բարոյական բարձրութիւնից, այնուհետև նա կը կատարէ անբարոյական գործեր և կդառնայ աւելի խստասիրտ, աւելի փչացած, քան տղամարդը. նա այնուհետև այլևս կանգ չի առնի ոչ մի խայտառակութեան առաջ։

Զգուշացիր այդ տեսակ կնոջից։

Լօմբրոզօն հաւատացնում է, որ այդպիսի կինը աւելի անզութ է, քան թէ նրա նման տղամարդը։

Կնոջ գլխաւոր արժանիքը ամենին սիրող սիրան է—ալտրուիզմ։

Գլխաւոր պակասութիւնը՝ ճշմարտութիւն չսիրելը։

Կինը կարող է մարդուն մոլորեցնել, խաբել. սա կնոջ սովորական գործն է։

Այս սովորութիւնը կանանց մէջ արմատացել է մի ամբողջ շարք հասարակական, ֆիզիքական ու հոգեկան պայմանների շնորհիւ։

Նա ստիպուած է եղել այդպէս վարուել, որպէսզի գոյութիւն պաշտպանէ։

Այս բանում մեղաւորը դարձեալ տղամարդիկ են, որ իրանց ֆիզիքական ու մտաւոր ոյժի շնորհիւ շահագործել են տգէտ, թոյլ էակին, կնոջը։

Կրօնական զգացմունքը կնոջ մէջ աւելի բարձր է, քան տղամարդու մէջ։

Եւ դա շատ հասկանալի է. կնոջ ճնշուած դրութիւնը, ուրիշին հաւատ ընծայելն ու հաւատարմութիւնը զարգացրել են նրա կրօնական ջերմեռանդութիւնը։

ԺԲ.

Այդպէս ուրեմն կնոջ և տղամարդու մէջ առայժմ կան հոգեկան մի քանի տարբերութիւններ, բայց դրանից երբէք չի կարելի եզրակացնել, թէ կանայք ստոր արարածներ են, իսկ տղամարդիկ բարձր։

Ոչ մի կասկած չկայ, որ կինը փիլիսոփայութեան, գիտութեան և գիւտերի մէջ յետ է տղամարդուց, բայց դրա փոխարէն նրանից բարձր է՝ դիտաստութեամբ, ժուժկալութեամբ, հաւատարմութեամբ և մտաւոր հաւասարակշռութեամբ. այդ յատկութիւններով և մտաւոր որոշ գծերով նա մօտենում է երեխայական տիպին։

Կանանց զգացմունքները առաջին տեղն են բռնում, ուստի զայրոյթն ու հրապոյրը յաղթում են կամքին. նրա համար մերձաւոր առարկաներն աւելի հասկանալի են, քան հեռաւորները, յիշողութիւնը աւելի զօրեղ է, քան տրամաբանական հասկացողութիւնը։

Նրանց մէջ աւելի զօրեղ են արտաքին աշխարհից տպաւորութիւն ստանալու ընդունակութիւնները. զօրեղ է հաւատը, յոյսը և երկիւղի հակումը։ Ճնշուած դրութիւնը պատճառ է դարձել նրանց երկչոտութեան, որից ծագել է կրօնական բնազդն ու ջերմեռանդութիւնը։

Պարզ է, որ կնոջ բոլոր գծերը նման չեն երեխայի գծերին։

Շատ շատերը պնդում են, որ իբր թէ կինը աւելի մօտ է նախնական մարդուն, քան թէ երեխային, որ նա նման է չզարգացած մարդուն:

Յայտնի է, որ երբ կինը զայրացած է, նրա զայրոյթը ծայրայեղ աստիճանին է հասնում: Հէնց այդ պատճառով էլ շատերը նրան նմանեցնում են վայրենի մարդուն:

Այս կարծիքը հաստատելու համար, նրանք յիշում են այն հանգամանքը, որ կինը շատ քիչ է ընդունակ փիլիսոփայութեան ու տրամաբանութեան, որ նա շատ քիչ է նպաստում գիտութեան ու արուեստների զարգացմանը:

Թէև դա ճիշտ է, բայց ուրիշ շատ դէպքերում կինը աւելի հեռու է վայրենի մարդուց, քան թէ տղամարդը. հեռու է, որովհետև ունի ուժեղ ալտրուիզմ՝ կարեկցութիւն, գթասրտութիւն, մարդասիրութիւն, պարտաճանաչութիւն, որովհետև աւելի քիչ է ընդունակ ոճիր գործելու:

Ինչ էլ որ լինի, պէտք է խոստովանել, որ կինը մտաւոր զարգացման տեսակէտից քիչ յետ է մնացել, ուշացել է:

Այս հանգամանքը չպէտք է մոռանալ, քանի որ ներկայումս գոյութեան կռիւը կատարւում է գլխաւորապէս մտաւոր ոյժի օգնութեամբ:

ԺԳ.

Կայ և մի ամբողջ շարք ուրիշ տարբերութիւն կնոջ և տղամարդու մէջ:

Այդ տարբերութիւնը կնոջ հաղնուելու և զարգարուելու մէջն է, որից երևում է, որ կինը

տղամարդուց յետ է մնացել հարիւրաւոր տարիներով:

Վայրենի մարդը մարմնին գեղեցկութիւն տալու համար չէր խնայում ժամանակ և միջոց: Այդ նպատակով նա գործ էր ածում թանգագին ակներ, գունաւոր փետուրներ, փայլուն քարեր. նա ծակում էր ականջները, շրթունքները, քիթը և նրանցից կախում զանազան մետաղներ ու թանգագին քարեր:

Շորը ծառայում էր իբրև զարդ և միևնոյն ժամանակ իբրև հարստութեան ու իշխանութեան նշան:

Այս զարդարանքներով մարդիկ ուզում էին ուրիշների առաջ երևալ ու պարծենալ:

Անցնում են ժամանակներ և մարդիկ սկսում են հագուստի յարմարութեան մասին էլ մտածել:

Շորը իբրև հարստութեան նշան կորցնում է իր նշանակութիւնը:

Բայց չէ՞ որ մարդու համար կարևոր է ոչ թէ հարստութիւնը, այլ գիտութիւնը, հոգու մաքրութիւնն ու համեստութիւնը:

Դժբախտաբար նոյնիսկ կրթուած երկրների կանանց մէջ զարգարուելու գաղափարը շատ անհնարին աստիճանով է տեղի տալիս շորի յարմարութեան գաղափարին:

Մինչև այժմ գործածութիւնից չեն ընկել երկար, մինչև գետինը քաշ եկող գեղեցիկ շորերը, որոնք և անյարմար են և վնասակար:

Կանայք իրանց մազերը չեն խուզում և նրանց զարդարում են կրիայի ոսկրների կտորներով

ոսկով, արծաթով—պարզ է որ այստեղ էլ նպատակը զարդարուելն է։

Այնպիսի վառ գոյներ, ինչպիսիք են՝ կարմիրը, ծիրանին, դեղինը, երկնագոյնը,—շատ յաճախ կարելի է հանդիպել կանանց և երեխաների շորերի մէջ, մինչդեռ աղամարդիկ դերադասում են մութ շորերը՝ սևը, մոխրագոյնը և կինամոնին։

Պարահանդէսների հագուստները՝ հոլանի կուրծքով, բաց թևերով, յիշեցնում են նախնական ժողովուրդների կիսամերկ դրութիւնը։ Այդ տեսակէտից կանայք քիչ են տարբերւում վայրենի ցեղերից։

Հին ժամանակներում մարդիկ սովորութիւն ունէին իրանց մարմինը զանազան ներկերով ներկելու, ներկայումս այդ սովորութիւնն արդէն վերջացել է, բայց կանայք դեռ շարունակում են երեսներին պուդրի ու կարմիր քսել, որ այնքան վնասակար է...

Չինաստանում կանայք աշխատում են նեղ կոշիկներով մանրացնել ոտները, իսկ Մեղանում դրա փոխարէն սեղմում են կուրծքի վանդակը վնասակար կորսետով։

Կանանց հագուստի մէջ երկու բնորոշ գծեր են աչքի ընկնում՝ գեղեցկութիւն և թանգութիւն։

Մօդային յարմարուելու համար կինը պատրաստ է կարել տալ ամենաթանգագին զգեստներ, հագնել ծանր ու անյարմար շորեր, որոնք չեն համապատասխանում նրան՝ ոչ առողջապահական և ոչ էլ նիւթական տեսակէտից։

Բայց աղամարդու հագուստն էլ շատ բանեբով անյարմար է։

ԺԴ.

Վերևում արդէն ասացինք, որ կինը իր հոգեկան ու ֆիզիքական առանձնայատկութիւնների շնորհիւ մնտենում է երեխայական տիպին։

Այդ բանը կարող է շատ եզրակացութիւնների առիթ տալ։

Բոլորովին ճիշտ է, որ երեխան ունի շատ աչքի ընկնող յատկութիւններ, որոնցով նա մնտենում է ստորին կենդանիներին, մանաւանդ կապկին։

Սակայն չէ՞ որ ճիշտ է և այն, որ կապկի ձագը մարդու հետ ոչ մի նմանութիւն չունի։

Եթէ այդպէս է, ուրեմն կարող ենք եզրակացնել, որ մեր երեխան աւելի շուտ նման է մի որևէ աւելի զարգացած էակի, քան թէ հասակաւոր մարդու։

Իսկ դրանից դուրս է գալիս, որ եթէ կինն աւելի երեխայի նման է, քան աղամարդը, ապա ուրեմն նա աւելի մնտենում է ապագայի կատարեալ արարածին։

Երեխաների մէջն է թաղնուած ամբողջ մարդկութեան յոյսն ու ապագան։

Իսկապէս կինը միայն իւր ցեղի պատկերն է, որ ոչ վատ է և ոչ էլ լաւ ամբողջութիւնից։

Այդ փաստերի շնորհիւ հասարակութիւնը կարող է դուրս բերել ուղիղ ու արդար եզրակացութիւն, կարող է նախազգուշանալ։

Պէտք է արիանալ հոգով և եռանդով ձեռք զարկել կնոջ բազմակողմանի կրթութեանը և պաշտպանել նրա իրաւունքները:

Կինը պէտք է լինի մեզ համար մի տեսակ սրբութիւն, որովհետև նա է մարդկութեան անցեալի ու ապագայի ներկայացուցիչը, նա է բարու և գեղեցկի սերմեր ցանողը:

Մի՞թէ այդ բոլորի համար մենք պէտք է կնոջը կոպտաբար նետենք դէպի կեանքի հոսանքը, պէտք է զրկենք նրան ամենատարրական իրաւունքներից: Ոչ, դա անարդարութիւն է:

Կինը հազարաւոր տարիների ընթացքում ճնշուած դրութեան մէջ է եղել. նրա համար փակուած են եղել շատ ասպարէզներ. նրա կրթութիւնը շատ սահմանափակ ուղեով է ընթացել: Միշտ քաջալերել են նրա զգացմունքները և կաշկանդել մտաւոր գործունէութիւնը և այդ ամենը անցել է սերունդից սերունդ, մօրից աղջկանը, աղջկանից թոռին: Ուստի բոլորովին զարմանալի չէ որ կնոջ ուղեղը զարգացել է այլ ուղղութեամբ և քիչ տարբերւում է տղամարդու ուղեղից:

Իսկապէս երկու սեռի ուղեղները տարբերւում են միմեանցից ոչ թէ ներքին կազմութեամբ, այլ արտաքին կողմից, այսինքն մտածելու եղանակով:

Այս էլ յիշենք, որ քանի ստոր է ժողովրդի քաղաքակրթութիւնը, նոյնքան քիչ տարբերութիւն կայ կնոջ և տղամարդու ուղեղների մէջ:

Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ ուղեղի տարբեր զարգացման պատճառը կախուած է քաղաքակրթութիւնից և ոչ թէ բնական պատճառից:

Այդ բոլորը մեր մէջ այլ կերպ կդասաւորուէր, այլ կազմակերպութիւն կստանար, եթէ կնոջը միջոց տայինք զարգացնելու իր ոյժերը՝ բազմակողմանի կերպով—տղամարդուն հաւասար, եթէ նրա ճանապարհը չփակէինք սովորութեան, աւանդութեան և օրէնքի ոյժով և եթէ թոյլ տայինք, որ նա իր ծագումով ու իրաւունքով տղամարդու հետ հաւասար աստիճանի վրայ կանգնէր:

Այսպիսի պայմաններում աւելի սակաւաթիւ կլինէին դժբախտ ամուսնութիւնները, աւելի բարոք վիճակ կստանային ամուսնական կեանքն ու ընդհանուր բարեկեցութիւնը:

Նորից կրկնում ենք այն ճշմարտութիւնը, թէ կնոջը դուրս բերելով ներկայ սարկական դրութիւնից, ազատելով նրան օրէնքի նախապաշարմունքից և տղամարդու քմահաճոյքից, մենք մեծ բարիք արած կլինինք ամբողջ հասարակութեան, ամբողջ մարդկութեան համար:

Թող կինը չլինի խաղալու տիկնիկ, ոգէտ ու թեթևամիտ, որովհետև այդպիսի յատկութիւններով նա կվնասէ թէ իրան, թէ ընտանիքին և թէ ամբողջ հասարակութեանը:

Թող նա չլինի ամուսնու արտացոլումը, սարկօրէն հնազանդուող նրա ֆիզիքական և մտաւոր ազդեցութեանը, որովհետև այդ հանգամանքը կարող է ճնշել նրա ինքնուրոյնութիւնը և վնաս հասցնել մտաւոր ընդունակութիւններին:

Թող նա չպառնայ խոնարհ զոհ, որ անարբ-
տունջ կերպով կրումէ իր ծանր լուծը, որ համ-
բերութեամբ տանումէ իր ստրկական վիճակը։

Բայց միևնոյն ժամանակ նա երբէք լինելու
չէ կին-տղամարդ, երբէք վերցնելու չէ տղամարդու
ձևերը, նրա մոլութիւններն ու տարօրինակութիւն-
ները, որովհետև այդ դէպքում կկորցնէ ամեն ինչ,
կկորցնէ իւր կանայութիւնը։

Նա պիտի դառնայ կին, բառիս բուն նշանա-
կութեամբ, պիտի մնայ հաւատարիմ իւր ներքին
բնութեանը, միևնոյն ժամանակ հասկանալով, որ
ունի ոչ միայն ծանր պարտականութիւններ, այլ
և որոշ իրաւունքներ, որ նրան այլևս չէ կարող
ճնշել տղամարդը։

Կինը պիտի լինի զարգացած, թէ մտաւոր և
թէ ֆիզիքական տեսակէտից. պիտի լինի խելացի,
կայտառ, առողջ, գիտակցաբար բարի, որպէսզի
կարողանայ այդպիսի յատկութիւններով ընտանիքի
ու հասարակութեան մէջ մտցնել լոյս ու բարու-
թիւն։

Թող նախկին Եւան, որ նման էր վախկոտ ու
թոյլ երեխայի, որ կաշկանդուած էր ապականիչ
հալածանքով կամ անտեղի հովանաւորութեամբ,
զարթեցնէ իւր գիտակցութիւնը և ծծէ տղատու-
թեան լոյսը։

Միակերպ դաստիարակիր աղջիկներին ու
տղաներին, միակերպ հոգա նրանց մասին, թէ ֆի-
զիքական, թէ բարոյական և թէ մտաւոր տեսա-
կէտից։

Թող դրա մէջ լինի մեր ներկայի յոյսն ու հա-
ւատը, մեր ապագայի ոյժն ու զօրութիւնը...

Երեխաների մէջն է թաղնուած մարդկու-
թեան ապագան։

Բոլոր մարդիկ դեռ երեխաներ են, թէև նրանք
երբեմն զարմանք են պատճառում իրանց չարա-
գործութեամբ ու բարքերի վատութեամբ։

Նրանց համար միշտ էլ հարկաւոր են կրթու-
թիւն ու դաստիարակութիւն, սէր և հոգատարու-
թիւն։ Նրանց հոգու համար միշտ էլ հարկաւոր է
թարմ ու առողջարար սնունդ։

Իսկ մարդկանց սիրել կարողանալը...

Որքան վսեմ բան է...

Մի քանի խօսք եիս

Սիրելի քոյրեր.

Հասարակութիւնը միանգամից փոխուել չի կա-
րելի, բայց դուք կարող էք հասարակական գործն
սկսել նրա նոր սերնդից երեխաներից։

Ձեզ է պատկանում փոքրահասակ աղջիկների
անմեղ հոգիները։

Ձեր պարտաւորութիւնն է նրանց դարձնել
հոգեպէս ուղիղ արարածներ, որոնց համար խորթ
են վատ կրքերը։

Ձեր բոլոր ոյժերը, ձեր ջանքն ու եռանդը
պիտի կենտրոնացնէք այդ փոքրիկ արարածների

վրայ, որովհետև դա է «ձեռնտուն», դա է նպատակայարմարը:

Միևնոյն ժամանակ և հրապուրիչ և զարհուրելի է օրիորդի հոգին:

Ինչ էլ որ լինի, մենք պէտք է ձգտենք դէպի բարձրն ու գաղափարականը:

Ապագայի Եւան գաղափարական կնոջ տիպը պիտի լինի: Նա պիտի վայելէ անպայման ազատութիւն:

Ուրեմն վստահ ձեռք զարկէք այդ գործին, ցանեցէք նոր սերմեր, մշակեցէք հողը նոր միջոցներով՝ հին աւանդութիւններից ու սովորութիւններից ազատ:

Դաստիարակութեան մէջ աւանդութիւնը գնահատելի և սուրբ բան է, բայց երբ նրան դարձնում են մի անփոփոխելի ծէս, այն ժամանակ նա վնասակար ու վտանգաւոր է:

Իւրաքանչիւր դաստիարակութիւն կորցնում է իւր նշանակութիւնը, երբ բոլորովին մոռացութեան է տալիս աւանդական սովորութիւնները:

Իւրաքանչիւր դաստիարակութիւն թոյլ ու անզօր է դառնում, երբ կուրօրէն հետևում է ժամանակի պահանջներին:

Ամերիկայում և Գերմանիայում դաստիարակութեան ոչ մի մեթոդ երբէք անխտիր կերպով չի գործածւում, որովհետև այդ դէպքում դաստիարակութիւնն իւր նպատակին չէր հասնի:

Ցեղը փաստերի կապակցութիւն է, որ ունի

արտաքին ամրութիւն և տևողութեան ընդունակութիւն:

Յարգանքով վերաբերուինք դէպի այդ յատկութիւնները:

Հարցնենք ցեղին. ինչի՞ցն է նա առաջացել, ո՞րտեղից են նրա դիմացկունութիւնը ու միւս առանձնայատկութիւնները:

Եւ եթէ մեզ յաջողուի նրանից պատասխան ստանալ, այն ժամանակ կարելի կլինի հասկանալ, թէ ցեղի ո՞ր յատկութիւնն է արժանի պահպանութեան և ո՞րը կարօտ է կատարելագործման:

Ցեղի առանձնայատկութիւնները խեղդող դաստիարակութիւնը՝ մեռցնող ոյժ է:

Ուրեմն պէտք է սովորել ու ուսումնասիրել, պէտք է աշխատել զարգացնել անձնական նախաձեռնութիւնը, պահպանել անհատական եռանդը, որպէսզի այժմեան ջահիլ օրիորդը չվախենայ տղամարդու դէմ առ դէմ կանգնելուց, որպէսզի նա կարողանայ առանց ծնողների ու դաստիարակների, առանց հովանաւորի ու ամուսնու էլ իւր գոյութիւնն ու ազատութիւնը պահպանել:

Թող, այսպէս ասած, դպրոցը հետևի այդ նպատակին, թող իւրաքանչիւր քաղաքում, գիւղում ու թաղում կազմակերպուին «կանանց խմբեր» և աշխատեն զարգացնել ազատ ու վստահ արարածներ:

Դա է բնական ճանապարհը:

Չէ՞ որ բոյսերն իրանք են բաց անում իրանց ճանապարհը դէպի արևն ու օդը, դէպի լոյսն ու ազատութիւնը:

Հարկաւոր է միայն չփակել այդ ճանապարհը:

Ներկայումս կնոջ դաստիարակութիւնը զանազան ձև ունի:

Ամերիկացի, անգլեացի ու գերմանացի կանայք դաստիարակում են իւրաքանչիւրն իւր երկրի սկզբունքներով, որոնք խիստ տարբերւում են միմեանցից:

Սակայն դաստիարակութեան զանազան ձևերի մէջ կայ մի նմանութիւն, որը աւելի նկատելի է դառնում գործադրութեան ժամանակ:

Այդ նմանութեան հիմնական գաղափարն այն է, որ կինն իրաւունք ունի դաստիարակուելու և զարգանալու իր համար և ոչ թէ ազամարդուն դուր գալու, նրա պահանջներին համայնալու համար:

Ջահիլ աղջկանից ստեղծել ազատ ու ինքնուրոյն կին, ահա այդ է դաստիարակութեան գլխաւոր նպատակը հիւսիսային երկրներում, Անգլիայում և Միացեալ-Նահանգներում:

«Սա իսկական անգլուհի է» խօսքերի մէջ պարունակւում է առողջութեան, ճարպիկութեան, ֆիզիքական համարձակութեան և դէպի իւր կենակիցն ունեցած անկեղծութեան ու հաւատարմութեան գաղափարը:

Այդպիսի կինը միշտ էլ կարող է բարեկարգ ու երջանիկ ընտանիք հիմնել:

Այստեղ դաստիարակին օգնում են ցեղային հզօր յատկութիւնները՝ եռանդ ու նախաձեռնութիւն, որ իւրաքանչիւր անգլուհու բնաւորութեան յատկանիշն են կազմում:

Անգլիայում աշխատում են իւրաքանչիւր օրիորդի հասկացնել, թէ նրա բաղդաւորութիւնն ու ապահովութիւնը իւր մէջն է գտնւում և ոչ թէ անյայտ ամուսնացուի. աշխատում են անգլուհու մէջ ներշնչել սեր դէպի բարձրն ու գաղափարականը, բայց միևնոյն ժամանակ չեն մոռանում կրթել բնածին յատկութիւնները—ազնուութիւն և եռանդ:

Աւելորդ է ասել, որ այստեղ էլ թերութիւններ կան:

Միւս, աւելի երիտասարդ և ընդարձակ երկրում, ինչպէս է Ամերիկան, մենք տեսնում ենք կանայի կրթութեան հրաշալի նմուշներ:

Դաստիարակութիւն և կրթութիւն ստացած օրիորդները կեանք են մտնում նոյնպէս լաւ զինուած, ինչպէս տղամարդիկ: Նրանք ընդունակ են նրանց հետ կռուելու, իսկ շատ դէպքերում նոյնիսկ յաղթելու:

Ամերիկուհին կարողանում է ամեն ինչ սովորել, ամեն բան դառնալ դուրս չգալով իւր կանայի բնութեան սահմանից:

Կին-բժիշկները խնամում ու բժշկում են հիւանդներին, կին-փաստաբանները դատ են պաշտպանում և տանում են գործը, կանայի շորով ճարտարապետները դիւտեր են անում և կատարելագործում մեքենաները...

Այդպիսի կանայք կենդանի ապացոյց են այն բանի, որ մէկ սեռը միւսին ենթարկելը անարդարութիւն ու անմտութիւն է, որ բաւական է կնոջը

տղամարդու պէս զինել և այն ժամանակ նա կկարողանայ տղամարդու հետ մրցել ամեն մի ասպարիզում։

Կնոջ այդպիսի դրութիւնը ստեղծում է մի հզօր բարոյական ոյժ։

Աշխարհիս երեսին ոչ մի տեղ ջահիլ օրիորդ կամ կին չունի այնպիսի անսահման ազատութիւն, այնպիսի մեծ յարգանք, ինչպէս Միացեալ Նահանգներում։

Այսպէս ուրեմն աշխարհիս երկու մասերումն էլ ժամանակակից կինը սկսում է հասկանալ իւր կոչումը։

Այժմ այլևս խնդիրը միայն տղամարդու հետ հաւասար իրաւունք ունենալու մէջ չէ։

Այժմ կինը ձգտում է ձեռք բերել իրաւունքների հաւասարութիւն, բայց միևնոյն ժամանակ գործնական կերպով աշխատում է տղամարդուց յետ չմնալ։ Նա ցոյց է տալիս մեծաւոր գործունէութիւն. նա ուզում է ունենալ բարոյական ազդեցութիւն և միատեսակ մասնակցութիւն համաշխարհային առաջադիմութեան գործում։

Իսկ մեզանում ընդհակառակը, օրիորդը կրթւում է բոլորովին հեռու իրական կեանքից։ Նա չի հասկանում իւր ապագայ պարտականութիւնները, չի նախագուշակում այն կռիւը, որ նա մղելու է տղամարդու դէմ։

Ջահիլ օրիորդներից պատրաստումեն մի տեսակ մաքուր թուղթ, որի վրայ ինչ որ կամենայ պիտի գրէ ապագայ ամուսինը։

Բայց ինչպէս էլ որ լինի կնոջ հասարակական դրութիւնը, այնուամենայնիւ նա շուտով գլխի կընկնի և կհասկանայ այն ամենը, ինչ որ իրանից ծածկել են աշխատում։

Իսկ եթէ նա այդ մասին ոչինչ չի արտայայտում, դրա պատճառը հասարակական կեղծաւորութիւնն է։

Ստով բան առաջ չի գնալ, կեղծաւորութիւնով գործ չի շինուի։

Պէտք է զարգացնել օրիորդի մէջ եռանդը և կռանել նրա կամքը, որպէսզի նա յետոյ անձնասուր չլինի կանացի թուլութեան, որպէսզի չենթարկուի կեղծ ու վնասակար ախտերի։

Կինը պիտի դաստիարակուի ինքը իրա համար, կամ եթէ կամենաք ամբողջ մարդկութեան համար։

Երբևիցէ տեսել էք մի դաստիարակ, որը իրան նպատակ դնէր երիտասարդներին ամուսնութեան համար պատրաստել։

Այդպիսի նպատակը ամենքին կծիծաղեցնէր։

Ենթադրւում է, որ ամեն մի տղամարդ կարող է ամուսին լինել, եթէ նա ազնիւ է, անկեղծ առողջ է և ընդունակ է իւր համար հաց վաստակելու։

Բայց ինչո՞ւ օրիորդներից բոլորովին ուրիշ պահանջներ ենք անում։

Մի՞թէ հասկանալի չէ, որ ամեն մի առողջ, ազնիւ, կրթուած, աշխատասէր օրիորդ, նոյնպէս ընդունակ է մարդու գնալու։

Այդպիսի օրիորդների հետ միասին անուշադիր չպէտք է թողնել և այն բազմաթիւ օրիորդներին, որոնք մարդու չեն գնում և որոնց թիւը հետզհետէ աճում է։

Ի հարկէ չամուսնանալն ընդհանրապէս կնոջ բարքին ու հակումներին ձեռնտու չէ։

Միանգամայն խելացի են դատում նրանք, որոնք կարծում են, թէ կանանց մեծամասնութիւնը պէտք է մարդու գնայ, զաւակներ ծնի և նրանց դաստիարակէ։

Այդպիսի կարծիքը ոչ թէ պախարակելի չէ, այլ ընդհակառակը գովելի։

Այո՛, գովելի է այդ կարծիքը, բայց ի՞նչ օգուտ, երբ սոցիալական պայմանները չափազանց աննախանձելի դրութիւն են ստեղծել։

Նախ՝ կանայք աւելի շատ են ծնւում քան տղամարդիկ, երկրորդ տղամարդիկ աւելի քիչ են ապրում, քան կանայք։

Այդ պատճառով տղամարդիկ չափազանց ծանրաբեռնւում են աշխատանքով։ Գոյութեան կռիւը նրանց ստիպում է միշտ տքնել մի կտոր հաց ձեռք բերելու համար։

Եւ դա հասկանալի է, որովհետև տղամարդը պարտաւոր է կերակրել ոչ միայն իրան, այլ և կնոջն ու երեխաներին։

Ահա այդ և ուրիշ շատ պատճառներով հետզհետէ աւելանում է չամուսնացած օրիորդների թիւը։

Ոչ ոք չի կարող նախադուշակել, թէ օրիորդներից ո՞րը պիտի ամուսնանայ և որը կոյս մնայ։ Ուրեմն հարկաւոր է մատաղ սերնդին այնպէս դաստիարակել, որ օրիորդները կարողանան միշտ էլ ինքնուրոյն լինել և ամէն մի դրութեան մէջ էլ իրանց գոյութիւնը պահպանել։

Չամուսնացած օրիորդները իրանց յոյսը հայրական հարստութեան վրայ դնելու չեն։

Հարկաւոր է նրանց խրախուսել, հարկաւոր է միջոց տալ սեփական աշխատանքով ապրելու։

Այդպիսի օրիորդներն էլ կարող են որոշ դեր խաղալ հասարակական կեանքում, ուրեմն անհրաժեշտ է, որ նրանք ունենան եռանդ, տոկունութիւն և գործելու ընդունակութիւն։

Նոյն իսկ մեր հնացած հասարակութեան մէջ, որտեղ աշխատում են խուսափել կնոջ մէջ եռանդ, կամք և ինքնուրոյնութիւն զարգացնելուց, կինը դեռ պահպանում է իւր մէջ ամենաազնիւ առաքինութիւններ. մաքրութիւն, հաւատարմութիւն, անկեղծութիւն ու անձնազոհութիւն։

Ճիշտ է, երբ կինը շեղւում է բարոյական ճանապարհից, նա տղամարդուց աւելի ստոր է ընկնում, բայց չէ՞ որ այդպիսի դէպքերը չափազանց սակաւաթիւ են, թէև նպաստող հանգամանքները բաւական շատ են։

Մի՞թէ դատարկ ցնորք կը լինի, եթէ մենք յուսանք, թէ բարոյական օրէնքները պահպանողի ազնիւ դերը աւելի պիտի դրաւէ կնոջը, եթէ նրա դաստիարակութիւնը ուղղուած լինի դէպի այդ կողմը։

Միթէ Ժաննա դ՝Արկի և ուրիշ երևելի կանանց գործերը զրաւական չեն և չեն հաստատում մեր ասածները։

Ի միջի այլոց քրէականապէս կինը նկատւում է հաւասար տղամարդուն. արդեօք այդպէս է ճշմարտութիւնը։

Պատրաստեցէ՛ք եռանդուն կանայք—օրիորդներ, որպէս զի հեշտ լինի ապագայի կռիւը։

Առանց զէնքի զինուորին պատերազմի դաշտը չեն ուղարկում...

Այդպիսի օրիորդներից շատերը կըդառնան պարտաճանաչ մայրեր՝ առանց կորցնելու իրանց ինքնուրոյնութիւնը, առանց շեղուելու սեփական արժանապատուութիւնից։

Շատերն էլ իրանց ամուսին կնարեն սրտով սիրած մարդուն և ոչ նրան, ով որ հարուստ է կամ մեծանուն, ով որ կարող է իւր կնոջ համար փարթամ կեանք ստեղծել և նրան անդործութեան մատնել։ Դրանց համար ատելի կըդառնայ անդործութիւնը։

Այն օրիորդները, որոնց չի աջողուիլ մարդունալ կամ որոնք յօժարակամ կհրաժարուին ամուսնութիւնից, չեն մտածիլ որ իրանց կեանքը արդէն խորտակուած է, որ ապագայում նրանց միայն վիշտ ու տանջանք է սպասում։

Հէնց սկզբից ընտելացած լինելով այդ մտքին, թէ կարող են ամուսին չգտնել, նրանք կըդառնան ատելի աշխատասէր, կլինին ատելի եռանդուն և ինքնուրոյն։

Մի՞թէ դատարկ ցնորք կըլինի, եթէ կարծենք, թէ մարդկութիւնը կարող է կնոջ ջանքով բարձր առաջադիմութեան հասնել։

Կանանց ազատութեան քարոզչուհիները կդառնան ամենալաւ դաստիարակչուհիներ, կըցանեն բարձր բարոյականութեան սերմերը և իրանց անկաշառ գործունէութեամբ մեծ բարիք կհասցնեն մեր թըշուառ հայրենիքին։

Սիրելի քոյրե՛ր, ապագայ Եւան դեռ կշարունակէ կատարելագործուել ու առաջադիմել. կըյայտնուին աւելի բարձր դաստիարակչուհիներ աւելի կատարեալ աշակերտուհիներով։

Եւ որքան շատ լինի այդպիսի դաստիարակչուհիների թիւը, դրանք իրանց գործունէութեամբ, նոյնքան լաւ կըկարողանան ոչնչացնել հասարակական չարիքները, ճիշտ այնպէս, ինչպէս ուժեղ հասկը ոչնչացնում է իրան շրջապատող որոմը։

Ինչպէս որ վատ խոտը անհետանում է լաւ հերկած դաշտում, այդպէս էլ կ՝անցյատանայ հին Եւան, որ ստեղծուած է տղամարդու եսասիրութեամբ, որ կեղծ ու ծածկամիտ է, որ ագէտ ու անդործ է։ Նրա ծաղիկը կթառամի, ցողունը կըփշրուի և նոյն իսկ արմատները կըխեխտուին օդի բացակայութիւնից։

Աճեցէ՛ք և ծաղկեցէ՛ք մարդկային բարօրութեան ու ապագայի երջանկութեան համար։

Այդ է պահանջում ժամանակի ոգին, այդպէս է վայել ձեր վսեմ կոչմանը։

Հարկաւոր է միայն սովորել, զարգանալ, հարկաւոր է գիտակցօրէն աշխատել ու կռուել յանուն արդարութեան ու իրաւունքների հաւասարութեան։

Եւ այդ կռուում չի կորչի ձեր վայելչակազմութիւնը, չեն պակասի ձեր կանայի հրապոյրները.....

ՀՀ Ազգային գրադարան
NL0235821

55.803

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի դալը (սպառ.) 5 կ.
2. Պարակիչ հիւանդութիւններ (սպառ.) . . . 5»
3. Ինչ է սիֆիլիսը (սպառ.) . . . . . 5»
4. Առողջապահական զրոյցներ (սպառ.) . . . . 5»
5. Ինչ է ժուժկալութիւնը (սպառ.) . . . . 5»
6. Ինչ է անառակութիւնը (սպառ.) . . . . . 5»
7. Պ. Եսերական ախտեր. (սպառ.) . . . . . 5»
8. Աշխատի առողջապահութիւն (Թարգմ. սպառ.) 2»
9. Մեր նեարդերը (սպառ.) . . . . . 10»
10. Սիֆիլիս (բարեփոխուած. սպառ.) . . . . 10»
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ. . . . . 10»
12. Գիժ ձախտ. (զօլտուխա). . . . . 10»
13. Ինչ է յանցաւորը. . . . . 15»
14. Կարիք և բարեգործութիւն . . . . . 15»
15. Յառաջդիմութիւն և դատապարտութիւն. . 15»
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ. . . . 15»
17. Արմնամարդութիւն (25 պատկերներով). . . 20»
18. Առողջապահական նուէր նորատի կանանց. . . 20»
19. Կինը և տղամարդը. . . . . 15»

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Պատրաստ են տպագրութեան համար հետևեալ գրքերը որ տպուելուց յետոյ ամբողջովին կուղարկուին [illegible] տեղական հիմնուելիք հիւանդանոցի օգտին

1. Կինը և տղամարդը. . . . . 15»
2. Ինչ է կաշու հիւանդութիւնը . . . . . 15 կ.
3. Պարբուծական հիւանդութիւն և օպիումոգիա . 10»
4. Երկարակեցութիւն . . . . . 15»
5. Առողջ և հիւանդ երեխայի ոգին . . . . . 15»
6. Սիֆիլիս և նեարդային հիւանդութիւններ . . 15»

396
Գ-91